

Հրապարակման ամսաթիվը՝ 29.12.2021թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԿՈՄԻՏԵ) ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՎԻԱՑԻՈՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1) Կոմիտեի ավիացիոն բժշկական փորձաքննության կարգի վերանայման աշխատանքի համակարգում՝ ներառելով նախաթռիչքային և նախահերթափոխային բժշկական զննման ընթացակարգերը:

2) Կոմիտեի կողմից ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների)՝ ավիացիոն միջազգային կազմակերպությունների պահանջներին համապատասխանության հավաստագրման կարգի վերանայման աշխատանքների համակարգում:

3) Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի աշխատանքների ընթացիկ հսկողություն՝ ավիացիոն բժշկական փորձագետների կողմից իրականացվող փորձաքննության հաշվետվական ձևերի կանոնավոր ստուգումների և վերլուծության իրականացում:

4) անհրաժեշտության դեպքում ավիացիոն մասնագետների բժշկական պիտանիության վերաբերյալ անհատական որոշումների ընդունում՝ սահմանված պահանջներին ոչ լիարժեք համապատասխանության դեպքում, դեպքերի կրկնակի վարում, բժշկական սերտիֆիկատների թողարկումը մերժելու կամ սահմանափակումների կիրառումով թողարկելու որոշումների ընդունում:

5) ավիացիոն բժշկական փորձագետների հավաստագրման և, անհրաժեշտության դեպքում, վերահավաստագրման գործընթացների համակարգում:

6) անհրաժեշտության դեպքում ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) նոր աշխատակիցների վերապատրաստում աշխատավայրում՝ ընթացակարգերի, փաստաթղթաշրջանառության պահանջների վերաբերյալ:

7) Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) տարեկան աուդիտի գործընթացի համակարգում:

8) էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի հաղորդակցության, Կոմիտեի աշխատողների, ՀՀ առողջապահության նախարարության և ենթակա կառույցների կամ միջազգային կազմակերպությունների (Միջպետական ավիացիոն կոմիտեի, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ), Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության)

հարցումներին պաշտոնական պատասխանների, ԻԿԱՕ-ի փաստաթղթերի, ինչպես նաև Չիկագոյի կոնվենցիայի N1 հավելվածի հետ ՀՀ օրենսդրության տարբերությունների հայտարարագրման, հարցաշարերին պատասխանելու գործընթացի ապահովում:

9) ավիացիոն բժշկական կենտրոնի աշխատողներին ոլորտի նորությունների վերաբերյալ իրազեկում:

10) մասնակցություն COVID-19 պանդեմիայի հետ կապված հանրային առողջապահական միջոցառումների ընթացակարգերի ներդրմանը, մասնավորապես՝ հանրային առողջապահական միջանցքի հետ կապված ԻԿԱՕ-ի «iPack» փաթեթի ներդրման աշխատանքներին:

11) COVID-19 պանդեմիայի հետ կապված հանրային առողջապահական միջոցառումների հարցերի վերաբերյալ միջազգային գիտաժողովներին, վեբինարներին մասնակցության ապահովում, Կոմիտեի ավիացիոն անվտանգության վարչության մասնագետներին մասնագիտական աջակցության տրամադրում:

12) Միջազգային ավիացիոն կազմակերպությունների կամ աուդիտ անցկացրած ստորաբաժանումների կողմից արձանագրած թերությունների վերացում:

Փորձագետը ներգրավվում է 1 (մեկ) տարի ժամկետով:

Փորձագետը պարտավորվում է՝

1. բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները,
2. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
3. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,
4. իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

Փորձագետի պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բուժական գործ, ընդհանուր բժշկություն մասնագիտությամբ բարձրագույն բժշկական կրթություն, մասնագիտացում (կլինիկական օրդինատուրա) որևէ կլինիկական մասնագիտությամբ,
- Հայաստանի Հանրապետությունում բժիշկ աշխատելու իրավասություն,
- ավիացիոն բժշկության հիմնական (ցանկալի է նաև խորացված) դասընթացի վկայականի առկայություն,
- ավիացիոն բժշկության բնագավառում հինգ տարվա աշխատանքային փորձ կամ առաջին դասի ավիաբժշկական փորձաքննության առնվազն 200 դեպքերի փորձ,
- քաղաքացիական ավիացիայի բնագավառում ավիացիոն մասնագետների աշխատանքային պայմանների վերաբերյալ տեղեկացվածություն, դրանից բխող առողջական վիճակի նկատմամբ պահանջների և առողջապահական ռիսկերի վերաբերյալ գիտելիքներ,

- մասնագիտական լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ կտա կիրառել այդ լեզվով հրատարակված մասնագիտական գրականությունը,
- համակարգչով ու ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Փորձագետի պաշտոնին ընդունվելու իրավունք չունի այն անձը, ով՝

1. պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է ծառայությունը կարգապահական տույժ կիրառելու հետևանքով,
2. չի անցել օրենքով սահմանված փորձաշրջանը,
3. օրենքի խախտմամբ նշանակվել է պաշտոնի,
4. չի պահպանել «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները,
5. դադարեցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
6. դատապարտվել է հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք,
7. երկու տարի անընդմեջ իր մեղքով չի ստացել վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտներ:

Աշխատանքի վայրը՝ քաղ. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան:

Փորձագետը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (դիպլոմների), վկայականի (վկայականների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք (տեղեկանքներ) համապատասխան մարմնից (մարմիններից)) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի կամ նույնականացման քարտի պատճենը,
- ինքնակենսագրություն:

Փորձագետի ընտրությունը կատարվելու է փաստաթղթերի և ինքնակենսագրությունների ուսումնասիրության եղանակով:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով անձնագիր կամ էլեկտրոնային փոստի միջոցով (հեռ. 060-43-42-61, էլ. փոստ՝ shoushanik.mkrtchyan@gdca.am):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 17.15-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 04.01.2022թ.:

Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղար
պարոն Միքայել Զալինյանին
քաղաքացի _____ -ից
(անունը, ազգանունը)

_____ հեռախոսահամարը
_____ էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ.
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ.
5. Այլ

_____ էջ,
_____ էջ,
_____ էջ,
_____ էջ,
_____ էջ,
_____ էջ:

Առդիր՝ _____ էջ:

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: